ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **24/սեպտեմբերի/2025 թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ...9... անդամներ:

Բացակա էին՝

.....Գոհար Խաչատրյանը, Հրայր Բագրատը, Պետուշան Ամերիկյանը, Մուրիկ Սարգսյանը.....

<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u> համայնքի ղեկավարի տեղակալ Աշոտ Խաչատրյանը, Կեչուտ գյուղի վարչական ղեկավար Արտակ Բագրատյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Կարեն Գեվորգյանը , Արսեն Գառնիկյան, Արմինե Ղազարյան

<u>Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար Վահագն Արսենյանը</u>

<u>Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը</u>

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 24-ի նիստի հետևյալ օրակարգը՝

1.1. Ջերմուկ համայնքի 2025 թվականի բյուջեի փոփոխությունները հաստատելու բյուջեի վարչական մասին պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկ համայնքի 2025 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման վերաբերյալ համայնքի ավագանուն հաղորդում ներկայացնելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.3. Համայնքային ենթակայության ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.4. Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքը դուրս գրելու և համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման փաստաթղթերում փոփոխություններ կատարելու մասին.

զեկ. համայնքի ղեկավարի խորհրդական Կ. Գևորգյան

1.5. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ա. Գառնիկյան

1.6. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգմանը համաձայնություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.7. Ջերմուկ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է նտնում ստորագրման պահից:

Կողմ----------9---------- *Դեմ*----------0---------- *Ձեռնպահ*----0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 62-Ա/

ԼՍԵՑԻՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ՝ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՋԵԿ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի, 90-րդ հոդվածի 6-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

1. Ջերմուկ համայնքի 2025 թվականի բյուջեի ծախսային մասում վարչական մասի պահուստային ֆոնդի՝ բաժին 11, խումբ 01, դաս 02, ծրագիր 51, 210002-«ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «4891-պահուստային միջոցներ» տնտեսագիտական հոդվածը նվազեցնել 50,0 (հիսուն) միլիոն ՀՀ դրամով, որն ուղղել համայնքի բյուջեի ֆոնդային մաս՝ համայնքի զարգացման հնգամյա և տարեկան աշխատանքային պլաններով 2025 թվականին նախատեսված սուբվենցիոն (կապիտալ ծախսերի) ծրագրերի և միջոցառումների իրականացման համար:

2. Հաստատել Ջերմուկ համայնքի 2025 թվականի բյուջեի՝ սույն որոշմամբ կատարված փոփոխությունները՝ ի գիտություն ընդունելով Ջերմուկ համայնքի 2025 թվականի բյուջեն՝ ս/թ սեպտեմբերի 24-ի դրությամբ՝

Ընդամենը՝ *եկամտային մաս՝ 938,624.9 հազար ՀՀ դրամ*

ծախսային մաս՝ 938,624.9 հազար ՀՀ դրամ

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ----9---- Դեմ----0---- Ձեռնպահ----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 63-Ն/

ԼՍԵՑԻՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՋԵԿ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝

1. Ի գիտություն ընդունել համայնքի ղեկավարի հաղորդումը Ջերմուկ համայնքի 2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման վերաբերյալ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----8---------- *Դեմ*----0---------- *Ձեռնպահ*----1----------

Ա. Հովսեփյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 64-Ա/

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42-րդ կետերով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետով՝

1. Համայնքային ենթակայության ուսումնական հաստատություններում իրենց փաստացի բնակության վայրից դասավանդման նպատակով ժամանող (ավելի քան 5 կմ-ը) մանկավարժական աշխատողներին տրամադրել տրանսպորտային ծառայությունների փոխհատուցում՝ ամսական 20200 /քսան հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ գումարի չափով:

2. Սահմանել, որ փոխհատուցումը տրամադրվում է շահառու հանդիսացող անձանց մասին հաստատության կողմից սույն որոշման հավելվածին համապատասխան տեղեկությունը համայնքապետարան ներկայացնելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----9---------- *Դեմ*----0---------- *Ձեռնպահ*----0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65-Ա/

ԼՍԵՑԻՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԼՐԻՎ ՄԱՇՎԱԾ (ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ) ԳՈՒՅՔԸ ԴՈՒՐՍ ԳՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 77-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 31-ի N 787-Ն հրամանով հաստատված Պետական կառավարչական հիմնարկների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների լրիվ մաշված (օգտագործման ոչ պիտանի) գույքի դուրս գրման կարգի 2-րդ և 13-րդ կետերի և հիմք ընդունելով «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ–ին և Ջերմուկի համայնքապետարանին ամրակցված՝ համայնքային սեփականություն համարվող լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրս գրման նպատակով ստեղծված հանձնաժողովի կազմած ակտը (NN 1-12)՝

1. Թույլատրել Ջերմուկ համայնքի (համայնքապետարանի) սեփականությունը համարվող լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի)՝ սույն որոշման հավելվածով ներկայացված գույքի դուրսգրումը:

2. Գույքի դուրսգրման գործընթացի կազմակերպումը և դրա հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը վերապահել «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ–ի (այսուհետ՝ ՀՈԱԿ) հաշվապահական մասին և Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնին:

2.1. Սահմանել, որ՝

ա/ ГАЗ-53 КО-413 աղբատարը (1990 թ.), ГАЗ-53-14 КО-413 աղբատարը (1989 թ.) , ДТ 75 թրթուրավոր երկու տրակտորները (1981 թ. և 1990 թ.), Т-40АМ տրակտորը (1986 թ.) և 4-LZ-2.5H հացահատիկային կոմբայնը (2006 թ.) *ենթակա են լուծարման*՝ իրենց մեջ պարունակում են այնպիսի նյութեր, դետալներ, առանձին մասեր, որոնք անհրաժեշտ են ՀՈԱԿ–ին հետագա գործունեության համար,

բ/ ձյուն մաքրող մեքենան (1981 թ.), 25-12 ՆԿ մուլտիկարը (1982 թ.), ավազ ցրող ГАЗ-53 մեքենան (1982 թ.), ГАЗ-53 մեքենան (1981 թ.), ГАЗ-53 КО-503В մեքենան (1984 թ.) և ГАЗ-53 КО-309 մեքենան (1986 թ.) համարվում են լրիվ մաշված՝ *պիտանի չեն հետագա շահագործման համար*, դրանց հետագա օգտագործումը, իրացումը կամ այլ օտարումը անհնար է:

3. Սույն որոշման 2.1-ին կետի «ա» ենթակետում նշված գույքի լուծարման արդյունքում անհրաժեշտ դիտարկված դետալները ներկայացնել գնահատման, մուտքագրել ՀՈԱԿ–ի պահեստ, իսկ մնացածը, ինչպես նաև «բ» ենթակետում նշված գույքը հանձնել որպես մետաղաջարդոն:

4. Դուրս գրված գույքի՝ մետաղաջարդոնի հանձնումից և (կամ) նրա առանձին հանգույցների, նյութերի, դետալների և մասերի՝ օրենքով սահմանված կարգով հնարավոր վաճառքից ստացված միջոցների բաշխումը (ծախսման ուղղությունները) վերապահել համայնքի ղեկավարին:

5. Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող գույքի 2025 թվականի գույքագրման փաստաթղթերում կատարել սույն որոշումից բխող համապատասխան փոփոխություններ:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------8---------- Դեմ----------0---------- Ձեռնպահ----------1----------

Ա. Հովհաննիսյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 66-Լ/

ԼՍԵՑԻՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՐՍԵՆ ԳԱՌՆԻԿՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան՝

1. Համաձայնություն տալ՝

ա/ Գնդեվազ գյուղի 10-016-0201-0112 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 23062025-10-0016) հողամասը (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ վարելահող, մակերեսը՝ 0,77781 հա) գյուղատնտեսական գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ,

բ/Գնդեվազ գյուղի 10-016-0201-0102 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 23062025-10-0020) հողամասը (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ վարելահող, մակերեսը՝ 0,6041 հա) գյուղատնտեսական գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 195 000 (հարյուր իննսունհինգ հազար) դրամ,

գ/ Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի N 42/6 հասցեում գտնվող 10-002-0034-0086 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 26062025-10-0016) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0,004 հա) բնակելի կառուցապատման նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 120 000 (հարյուր քսան հազար) դրամ,

դ/ Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների փողոցի N 22/6 հասցեում գտնվող 10-002-0032-0133 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 29072025-10-0013) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0,0036 հա) բնակելի կառուցապատման նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 110 000 (հարյուր տաս հազար) դրամ,

ե/ Ջերմուկ քաղաքի 10-002-0445-0025 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 08092025-10-0004) հողամասը (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ այլ, մակերեսը՝ 0,13108 հա) գյուղատնտեսական գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 100 000 (հարյուր հազար) դրամ,

զ/ Ջերմուկ քաղաքի Սայաթ–Նովայի փողոցի N 48 հասցեում գտնվող 10-002-0033-0040 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 10092025-10-0016) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0,25097 հա) բնակելի կառուցապատման նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 7300000 (յոթ միլիոն երեք հարյուր հազար) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------9 Դեմ----------0 Ձեռնպահ----------0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67-Ա/

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՑԱՄԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԾԱԾԿՈՒՅԹԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 11-ի «Հայաստանի Հանրապետության ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգման կարգը հաստատելու մասին» թիվ 431-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի դրույթներով՝

1. Համաձայնություն տալ 2025 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ կազմված Ջերմուկ համայնքի ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգմանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ----------9---------- *Դեմ*----------0---------- *Ձեռնպահ*----------0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 68-Լ/

ԼՍԵՑԻՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի հոկտեմբերի 22-ին, ժամը՝ 15.00-ին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ----------9---------- *Դեմ*----------0---------- *Ձեռնպահ*----------0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69-Ա/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն
Արսենյան Վահագն Աշոտի	
Սարգսյան Վարդան Ռաֆիկի	
Սարգսյան Լուսիկ Ժորայի	բացակա
Վարդազարյան Աննա Վասակի	
Խաչատրյան Գոհար Բաբկենի	բացակա
Համբարձումյան Մխիթար Սամվելի	
Այվազյան Մխիթար Վոլոդյայի	
Մկրտչյան Մարինե Մայիսի	
Բաբայան Ժիրայր Ժորայի	բացակա

Մնացականյան Արկադի Ալբերտի	
Գևորգյան Մանան Աղվանի	բացակա
Վահանյան Վարուժան Կնյազի	
Հովակիմյան Ազատ Հայրիկի	
Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի	բացակա.

Ջերմուկ համայնքի ղեկավար՝

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը _____